

8. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Մարդահամարի նյութերի մշակման աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ էր ապահովել որոշակի պայմաններ՝ բավարար քանակությամբ սենյակներ, սեղաններ, աթոռներ, համակարգիչներ, ջեռուցող սարքեր, գրենական պիտույքներ և այլն: Նկատի առնելով դա՝ դեռևս 2009թ. ամռանը ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչությանը հատկացվեցին լրացուցիչ սենյակներ ոչ միայն վարչության աշխատակիցների համար, այլև 12 հազարից ավելի պայուսակների պահեստավորման, մարդահամարի նյութերի մշակման աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Պայուսակների պահեստավորման համար ձեռք բերվեցին 120 մետաղական պահարան (յուրաքանչյուրում 100-ական պայուսակ), գրասեղաններ, աթոռներ, բարձրակարգ համակարգիչներ, տպող և պատճենահանող սարքեր, տաքացուցիչներ:



8.1 ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԾԱԾԿԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Մարդահամարի ծածկագրման գործընթացն իրականացնելու համար մրցութային կարգով աշխատանքի ընդունվեցին թվով 125 ժամանակավոր աշխատողներ՝ ծածկագրողներ: Մրցույթի ընթացքում նախապատվությունը տրվեց բարձրագույն կրթություն ունեցողներին և ուսանողներին, ինչպես նաև՝ մարդահամարի նախորդ փուլերին ունեցած մասնակցությանը: Հաշվի առնելով անձի ունակությունները՝ որոշ դեպքերում աշխատանքի ընդունվեցին նաև նախնական մասնագիտական կրթությամբ անձինք: Ստորև բերված աղյուսակը բնութագրում է ծածկագրողների սեռատարիքային կազմը և կրթական մակարդակը:

Սեռը, տարիքը	Ընդամենը	Կրթական մակարդակը		Ուսանող
		Բարձրագույն	Միջին մասնագիտական	
Ընդամենը	125	100	4	21
19-29	49	27	1	21
30-39	25	25	0	0
40-49	27	26	1	0
50-59	20	19	1	0
60-69	4	3	1	0
Տղամարդիկ	30	23	1	6
19-29	20	13	1	6
30-39	3	3	0	0
40-49	3	3	0	0
50-59	3	3	0	0
60-69	1	1	0	0
Կանայք	95	77	3	15
19-29	29	14	0	15
30-39	22	22	0	0
40-49	24	23	1	0
50-59	17	16	1	0
60-69	3	2	1	0

Նոյեմբերի 30-31-ին իրականացվեց ծածկագրողների հրահանգավորում: Դեկտեմբերի 1-ին նրանք բաժանվեցին ըստ հերթափոխերի, ծանոթացան իրենց աշխատանքային սենյակներին և տեղերին, որից հետո նրանց տրամադրվեցին անհրաժեշտ դասակարգիչներն ու ձեռնարկները: Դեկտեմբերի 3-ին սկսվեցին ծածկագրման աշխատանքները: Մեկ շաբաթ անց ծածկագրողներից առանձնացվեցին



մոտ 30 անձ (այդ թիվը կարող էր փոփոխվել յուրաքանչյուր ամիս), որոնց հանձնարարվեց ծածկագրողների կատարած աշխատանքի ստուգումը:

Ծածկագրողները և ստուգողները վարում էին հատուկ գրանցաթերթիկներ՝ օրագրեր, որոնցում նշում էին տվյալ օրվա ընթացքում ծածկագրած/ստուգած պայուսակների համարները, ծածկագրողի/ստուգողի անուն-ազգանունը, հերթափոխը, ստացման և հանձնման ամիս-ամսաթիվը:

Պետք է նշել նաև, որ սկզբունքորեն չէր արգելվում ստուգողին ժամանակ առ ժամանակ վերադառնալ ծածկագրման: Այդ դեպքում ծածկագրողների շարքից ընտրվում էին նոր ստուգողներ:

Ծածկագրման/ստուգման գործընթացը իրականացվեց երկհերթ աշխատանքային օրով՝ ծածկագրման համար նախատեսված 2 աշխատասենյակներում: Մարդահամարի վարչության աշխատակիցները նույնպես անցան երկհերթ աշխատանքային ռեժիմի: Նրանց պարտականությունների մեջ էր մտնում.

- պահեստից ստանալ տվյալ օրվա ընթացքում ծածկագրման ենթակա պայուսակները՝ նշելով դրանց քանակները համապատասխան մատյանում, և դասավորել դրանք համապատասխան աշխատասենյակի հատուկ առանձնացված տեղում,

- հետևել, որպեսզի ծածկագրողները ծածկագրված պայուսակները նշեն որոշակի գույնով (դեղին) և դասավորեն դրանք ծածկագրված պայուսակների համար նախատեսված տեղում,

- հետևել, որպեսզի ստուգողները ստուգված պայուսակները նշեն մեկ այլ (կապույտ) գույնով և դասավորեն պահեստ վերադարձնելու համար հատկացված տեղում,

- յուրաքանչյուր հերթափոխի վերջում ստուգողներից հավաքել վերը նշված օրագրերը,

- ստուգված պայուսակների տեղեկատվությունը օրագրերից մուտք անել համակարգիչ, հաջորդ օրն օրագրերը վերադարձնել ստուգողներին,

- իրականացնել վերահսկողություն՝ ծածկագրողների հաճախումների և սենյակներում պատշաճ աշխատանքային մթնոլորտ ապահովելու նկատմամբ:

Պայուսակների նկատմամբ հսկողությունը պահեստ-սենյակներ և սենյակներ-պահեստ շարժի նկատմամբ իրականացվում էր համապատասխան փաստաթղթերի վարմամբ:

Ստուգողների օրագրերից ամենօրյա տեղեկատվության մուտքագրումը համակարգիչ. աստիճանաբար ձևավորվում էր բազա, որը հնարավորություն էր տալիս իրականացնել լրացուցիչ վերահսկողություն պայուսակների շարժի նկատմամբ: Բացի այդ՝ նշված բազան թույլ էր տալիս նաև ցանկացած պահի դրությամբ տեղեկանալ, թե տվյալ պայուսակը գործընթացի որ փուլում է գտնվում, ով է այն ծածկագրել (ծածկագրում) կամ ստուգել (ստուգում): Նշված բազայի օգնությամբ հնարավոր էր լինում նաև ժամանակի մեջ վերահսկել ծածկագրման ողջ գործընթացը՝ արդյոք այն ետ չի՞ մնում սահմանված ժամկետից:

Բուն ծածկագրման գործընթացն իրականացնելիս առաջանում էին արագ արձագանք պահանջող խնդիրներ: Դրանցից մեկը, ինչպես և 2001թ. մարդահամարի նյութերի ծածկագրման ժամանակ, վերաբերում էր 27-րդ հարցին (կրճատ



ձևակերպումով՝ տնտեսական գործունեության տեսակին): Այս անգամ ևս զգալի քանակի հաշվարարների կողմից այս հարցը լրացվել էր հապավումներով (հակառակ մարդահամարի հարցաթերթը լրացնելու հրահանգի պահանջի և վարչության աշխատակիցների բազմաթիվ զգուշացումների): Մակայն, ի տարբերություն ծածկագրման նախորդ գործընթացի, այս անգամ հնարավոր եղավ օգտվել համացանցից, որին տիրապետում էին ծածկագրողները: Ծածկագրողների թվից առանձնացվեցին մի քանիսը՝ նշված հարցերի վերաբերյալ առաջադրվող հարցադրումների պատասխանները գտնելու համար, և որոնումները համացանցում հիմնականում տալիս էին դրական արդյունք:

Ծածկագրման գործընթացը տևեց 6 ամիս և ավարտվեց 2012թ. հունիսի 1-ին:



8.2. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶՄՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Մարդահամարի հարցաթերթերի տվյալների մուտքագրման համար հավաքագրվեցին տարբեր տարիքի և մասնագիտությունների 110 մուտքագրողներ: Նրանք ընտրվել էին թեստավորման արդյունքում:

Մուտքագրման աշխատանքները կատարվեցին երկհերթ գրաֆիկով և իրականացվեցին 6-ամսյա ժամկետում՝ 2012թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. օգոստոսի 1-ը:

Տվյալների մուտքագրումն իրականացվեց երկու աշխատասենյակում: Յուրաքանչյուր աշխատասենյակի մուտքագրողներից լավագույն երկուսն ընտրվեցին որպես խմբավարներ, որոնք հսկում էին մուտքագրողների աշխատանքը:

Մուտքագրման աշխատանքները կազմակերպվել էին ցանցի միջոցով: Հարցաթերթի աշխարհագրական կողերը և այդ կողերի համապատասխան ստեղծված ֆայլը ցանցի միջոցով ուղարկվում էին մուտքագրողի համակարգիչ՝ տվյալ պայուսակի հարցաթերթերի տվյալները մուտքագրելու համար: Մուտքագրված տվյալները անմիջապես կուտակվում էին սերվերի համապատասխան թղթապանակների մեջ: Ապահովության համար ստեղծվում էին նաև այդ թղթապանակների կրկնօրինակները:

Մուտքագրողներից ընտրվեցին նաև ստուգողներ (վերիֆիկատորներ), որոնք պայուսակների 70%-ը ենթարկեցին կրկնակի մուտքագրման: Կրկնակի մուտքագրման համար ընտրվել էին հարցաթերթի առավել կարևոր դաշտերը:

Մուտքագրման աշխատանքների ավարտից հետո սերվերի համապատասխան թղթապանակների ֆայլերը միացվեցին՝ ստեղծելով տվյալների սկզբնական բազան: Այդ բազան ենթարկվեց կառուցվածքային ստուգման, այսինքն՝ ստուգվեց մուտքագրված տվյալների համապատասխանությունը պայուսակների գրանցման ֆայլի տվյալների հետ:

Այս աշխատանքներից հետո տեղեկատվական բազան պատրաստ էր տրամաբանական հսկման ծրագրի փուլ անցնելու համար:



8.3. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶՍՅԻ ԱՎՏՈՄԱՏ ԽՄԲԱԳՐՈՒՄ

ՀՀ 2011թ. մարդահամարի տվյալների մուտքագրմանը զուգահեռ սկսվեց մարդահամարի տվյալների բազայի տրամաբանական սխալների ավտոմատ խմբագրման ծրագրի փորձարկումը: Այդ փուլում, երբ ամբողջականանում էին որևէ մարզի տվյալները, սխալների խմբագրման համար օգտագործվում էր լրացուցիչ՝ աղյուսակային մեթոդը: Ստացվում էին աղյուսակներ՝ խաչաձևելով տարբեր փոփոխականներ: Այդ փոփոխականների միջև անհամապատասխանություններ հայտնաբերելիս ծրագրում կատարվում էին համապատասխան ուղղումներ: Այս փուլում տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժինը սերտորեն համագործակցում էր տվյալների մշակման և դասակարգումների բաժնի հետ:

Երբ մուտքագրման աշխատանքների ավարտից հետո ստեղծվեց մարդահամարի տվյալների բազա, և այդ բազան մաքրվեց կառուցվածքային սխալներից, ավտոմատ խմբագրման ծրագիրն աշխատեցվեց այդ բազայի վրա, այն մաքրվեց սխալներից, և մաքրված բազան պահվեց նոր ֆայլում:

Մակայն մինչ այդ խմբագրման ծրագիրը ենթարկվեց որոշ փոփոխությունների, քանի որ բազայում հայտնաբերվեցին որոշ սխալներ, որոնք հաշվի չէին առնվել ծրագրում: Դրանց համար ծրագրում ավելացվեցին այդ սխալների հայտնաբերման և ուղղման նոր հրամաններ:

Ավտոմատ խմբագրման ծրագիրը կազմված է երեք մասից: Առաջին մասն ուղղում է հարցաթերթի 1-ից 9-ը հարցերին վերաբերող տվյալները՝ անձի հերթական համարը, բնակության կատեգորիան, բացակայության կամ ժամանակավոր ներկա գտնվելու տևողությունը, վայրը և պատճառը, անձի ազգակցական կապը՝ առաջինը գրված անձի նկատմամբ, մոր (հոր) հերթական համարը, սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարին և տարիքը՝ լրացած տարիներով: Այս ծրագրի արդյունքում մաքրված բազան համարվեց մուտքային՝ սխալների ուղղման երկրորդ ծրագրի համար: Ծրագրի երկրորդ մասը վերաբերվում է հարցաթերթի 10-ից 33 հարցերին: Ծրագրի երրորդ մասը ուղղում է տնային տնտեսությանը վերաբերող տվյալները: Սխալների ուղղման երրորդ ծրագրի աշխատանքի արդյունքում ստացվեց բոլոր սխալներից մաքրված բազա:

